

Իսկ զբաղանդեալ մէջ կը հանդիպինք հետեւեալ տիտաններու, որոնք եւ թէեւ համաշխարհային համբաւ չահած են, բայց քաղաքակրթութեան մեքենային ծաղկման ոչինչ ըրած են: Շեքսպիր, Վիլքիմ, Հիւկո, Անթուան Ֆլաման, Թոլսթոյ մէյմէկ զըչի հակաճիւղ են միայն:

Եզրակացնելով, քաղաքակրթութիւնը մենք մեքենայ մ'է, որուն իւրաքանչիւր

մասնիկը իր տեղը դրուելու համար մասնազէտ ձեռքերու կը կարօտի: Ազգ մը ամենէն առաջ պարտաւոր է նախ իր քաղաքակրթութեան մեքենան շարժումի մէջ դնել, և յետոյ աշխարհի գեղեցկութիւններու շուրջ գողտրիկ տողեր գրել: Առաջինը աւելի հրամայական է քան վերջինը:

ՀՄԱՅՆԱԿ ՍՐՈՅԱՆ

Նիւ-Եորք

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1924, էջ 61)

Կ.

Պելկրատի մէջ Հ. Եղիայի առաքելական պաշտօնը իր վախճանին կը հասնի՝ հասակին ծանրութեան և խանգարուած առողջութեան պատճառաւ: Առ այս՝ կ'արժէ իրեն ապացոյց մէջ բերել առ Աբբահայրն ուղղած Մայիս 19 թուակիր մէկ թուղթէն՝ հետեւեալ սրտաշարժ տողերը: Իր տկար վիճակին մէջ անգամ մը կը կանչուի մահ համբժի մը քով. Հ. Եղիա անձնանուէր հովուի մը եռանդով կը փութայ իսկոյն. կը խոստովանցնէ, կը հաղորդէ հիւանդը ու՝ ժամ մը կը ստիպուի անոր քով մնալ. « և յետ այսմ - կ'ըսէ - եկին ոմանք անձինք հանդերձ նոտարին, և մինչ սկսաւ « նոտարն գրել՝ ես վերստին տկարացայ, և մինչ տեսին զիս ի յայսպիսի տկարութեան՝ « թեան՝ հարկադրեցին զիս ընկողմանիլ ի վերայ միոյ մահճի, և այսպէս առնելով « ընդ երկար ժամանակ, հազիւ կարաց խելս ի գլուխս գալ »:

Արդիւնազարդ հովուը նկատի առնելով ժողովուրդին բարիքը՝ զեռ չմեկնած իր սիրելի պաշտօնատեղիէն՝ հարկ կը համարի իր յաջորդին համար գծել հետեւելիք կարեւոր կէտեր - որոնք արդիւնք են իր իմաստուն և փորձ պաշտօնավարութեան - յաջող և արդիւնաբեր ընելու անոր գործունէութիւնը:

Իր ամբողջ նամակին ընթացքէն կ'երևի սակայն, որ այդ խրատները կու տայ՝ առանց որոշապէս տեղեակ ըլլալու թէ ո՞վ յաջորդ պիտի կարգուի իրեն:

Կը տեղեկագրէ նաև սոյն նամակով բաւական լուրջ քաղաքական դէպքեր:

Գերայարգեցեղոյ և վսեմագոռնեղի տեսանման տեսանման
Միխրայրայի Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն միտում

... Դեռ և յետ յայտմ յայտ առնեմ զայս՝ առ քոյդ խոհեմութիւն, զի եթէ տէրն կամեցի ի գալն աստ նոյնոյ համանշանեցելոյ՝ անձին, նախապէս զոմանս իրատես տալի է նմա, որպէս զի այնու թերես զգուշացի այնպիսեաց անպատեհից շարժմանց, որով հետեւ ըստ ինքեան ներ յայտպիտում պաշտօնի այնպիսաբար վարիլն ոչ է բարի, որք և են այտօրիկ հախիկն է այս, զի ի մէջ քարոզին, նաև ի սեղանոյ ուրուք ոչ է լաւ յիշել թարց իմիք հարկաւորութեան զարհեստական հուրն, նաև զարիսեկն դժոխոց։ Երկրորդ, զի որքան կարելի է շանայցէ ընդ ժողովրդեանն սիրով և հեզութեամբ վարիլ։ Երրորդ՝ զի ի մէջ քարոզին, նաև յարտաքոյ նորին ոչ է հարկ ներ այջքան ազանց, զազգն իւր պախարակել, զի յայտպիսեաց բանից ժողովուրդն կարի յոյժ խորշին, նաև զմեծացոյն պատկառանս կրեն։ Չորրորդ, զի զեղանակ ընթերցման աւետարանին ուղղելի է, զի ոչ է լաւ գլոյնական եղանակաւ ընթեռնուլ զաւետարան։ Հինգերորդն է, զի ներ սրբոյ պատարագին ոչ է հարկ այնքան տարածմամբ ձեռք ասել զաղօթն, լաւ է բազմաց հետեւիլ, քան թէ միոյն։ Վեցերորդ, զի ի մէջ քարոզին ոչ է այնքան հարկ ի վեր քան զպակն պատալ։ Եթեքերորդ, զի ներ խօստովանութեանն ոչ է լաւ և ոչ է բարի, զի զխօստովանօղսն զայրացմամբ յանդիմանել, և թարց արձակման աշտու պատճառաւ յետս դարձուցանել, թէ ոչ գիտեն զհաւատաւս, ... և այլն։

Աւթերորդ, շանալի է հոգուեակաբար զգուշանալ ի սնափառութենէ և ի բարդաբաւ իութենէ, զի ի յայտպիտոյ խոսակցութենէ՝ ոչ երբէք հետեւին բարիք, այլ մանաւանդ շարիք։ Իններորդ, զի զբարկութիւնն իւր սակաւ ինչ շանայցէ մոլորացուցանել, և ընդ տիրացու յակօրին մեղամբար վարիլ, զի նա ինքեան պիտոյ է։ Տասներորդ, զի յոյժ բարի լինէր ինքեան, եթէ յաւուր առաջ զաւետարանն, զգիրքն, և զշարականն տես արասցէ քանի մի անգամ ընթեռնուլ, մանաւանդ զաւետարանն։ Այլ և զբարեկենդանն պարտի ըստ լաթինացուց առնել, այտինքն յերեքշաբթի աւուրն, նաև ի չորեքշաբթի աւուրն կերիցէ զմիս, զի աստ բաց ի յոմանց սակաւուց անձանց պէքեաւոց, թէ տեղացիք իցեն, և թէ վաճառականք, ամենեքին ըստ լաթինացուց առնեն, և այլք որք ոչ ուտեն, չեն ի համարի։ ... Ես յառաջնում տարուշն զչորեքշաբթին պահէի, նաև զբարեկենդանն ի կիրակէի աւուրն առնէի, բայց մինչ տեսի, զի այնպիսաբար վարիլս զոչ իմն բարութիւն առեբէ՝ հաւատոյս կամ անուանս, այլ միայն կայթակղութիւն, վասն այտորիկ ես ևս այժմ ըստ լաթինացուց առնեմ զպատն և զուսիտն... զսրբաշնութեանն դնելոյ կերպն ուսցի, և ոչ միայն զերեկոյեանն, այլ և զառաւոտեանն, զի զսոյն կերպն Հ. Անդուն լաւ գիտէ, զի լէհացուց հայքն ըստ մեծի մասին այսպէս առնեն...։ Պարոն ճանազդիկն զիր եկն ի թօխաղու, և ի նմին թղթոյ ծանուցանեն՝ թէ ի յերգրու մայ ի թօխաղ ոչ կարէ քէվառն գալ. նաև ոչ իսկ ի թօխաթու կարէ գնալ յերգրում, և մանաւանդ ի յերգրումայ ի յանէմտան, զի բաց իրէվանա՝ վերստին տիրեալ է զղլալան այնց զաւուրաց, որ օսմանցին տիրապէտեալ էր նախապէս, և այլն։ Դեռ յայս շաբաթ իլովցի հայ մի եկն աստ, և նա ըստ որում պատմէ, լէհացիք այժմ ըն մեծի վշտի կան, մօսկօֆն ասէ՝ հարիւր հազար զինուորք նստեալ է ի լէհիստան, ճէնուալիսիմօն բազմօք զօրովք նստեալ է ի յիլով քաղաքն, և քաղաքացիքն վասն ծախից սեղանոյ նորին յաւուրս ճ թալէր վճարեն բաց ի պահարեղինաց և չէթիցին, զի այսպիսեաց ծախքն հրէայքն հոգան, և ի խոստ հակառակ է հրէից ազգն մօսկօֆաց։ Ի գաւառն ունիւր ֆիլպուրդին շուրն սոքա կտրեցին, և զմասն ինչ ի զօրացն կայսերական անդէն եղին, զմասն ինչ ևս հանդէպ զօրու Ֆրանսիացին, իսկ և զմնացեալ հեծելազօրսն հանդերձ

1. Անձին ընտրութեան զեռ հաստատապէս ծանօթ չէ Հ. Եղիա Վարդապետ, ինչպէս որ բերեց.

գատանայիւք զնալոց են ի հողն ֆրանսըզու¹. և զայս այսպէս գիտեիով, ընդդէմ հորա
այսքան զինուոր ևս միշտ ի պատրաստի կայ: Փորթուքալու թագաւորն Ծ/Թ զինուորս
յղեալ է ի սպանեա, և այժմ կայսրն զմի ճէնոալ յղեաց առ նոսա: Ոմանք ասեն, թէ
հաշտութիւն լինի, իսկ այլք զընդդէմն ասեն....:

Ի Պելկրատ Գ Եւնիս
1735

Պատրաստական ծառայ ամենայնի
Եղիա վարդապետ կոստանդնուպօլսեցի

ԿԱ.

Հ. Յակոբ Բուզայեան յաջորդեիով Հ. Եղիայի՝ կը ստանձնէ հովուութեան
պաշտօնը Պելկրատի Հայ ժողովուրդին՝ որ կը համակրի իրեն, ծանօթ ըլլալով մա-
նաւանդ տեղական լեզուին. թէև միւս կողմանէ հօտը կը դժուարի յոյժ նախորդէն
զրկուելուն, մինչև իսկ փափագեիով որ ինքն ալ ըզվերնին մնայ. — ահա ինչ որ
ուրեմն կարողացած ենք Հ. Եղիայի մէկ ուրիշ նամակին մէջ:

Բուզայեան մին է Մխիթարայ այն աշակերտներէն՝ որոնք քաղաքական վերա-
հաս աղէտին պատճառաւ՝ Մեթնի Մենաստանին մէջ իրր պահապան մնացին, և
ապա գերի բռնուելով Պուլիս տարուեցան ու փրկանքով միայն ազատեցան: Եւ որով-
հետեւ այժմ իր մասին է մեր խօսքը՝ յօգուտ իր կենսագրութեան կը դնենք շատ
փորձրիկ տեղեկութիւն մ'ալ, թէ յիշեալ վարդապետը Մխիթարայ Միաբանութեան
կը նուիրուի՝ տնէն փախչելով, ինչպէս ինքն իսկ կը յիշատակէ ազգականներուն,
ըսելով ծնողաց մասին՝ թէ « տնէն փախչելոյս կակիծն քաշեցին »: Աւելորդ չենք
նկատեր յիշատակելու նաև Մխիթարայ մէկ հայրենի զոգարիկ բացատրութիւնը՝ զոր
Հ. Յակոբ իրր համեմատական եզր մէջ կը բերէ այսպէս. « Մեր Գերյարգելի արքայ
« հայրն երբ որ զիս պէլլըդատ խրկեց, ասաց թէ քո կարօտը կոմիտասէն և ստէ-
« փանէն կառնեմ. ուրեմն դու ալ ո՞վ սրբուհի, զիմ կարօտս սիմաէն և չէջիլիաէն
« առնես, զի որպէս զիտես որ սիման քոյր իմ է և հօր քոյր քո, իսկ չէջիլեան
« դուստր եղբորս է և քոյր քո (Գր. 1735 Պէլլըդատ Դեկտ. 2):

Իբրև կարևոր կէտ մը կը նշանակեմ և այն, որ նոր առաքեալը ըստ հետագայ
նամակին՝ իր պաշտօնին կը ձեռնարկէ 1735 Հոկտ. 8ին. այսպէս ինքնին կ'ուզողուի
ուրեմն վանքիս ժամանակագրութեան այն անցքը՝ որ փոխանակ 1735ի՝ դրուեք
է 1736՝:

Նամակագիրս յետ նշանակելու Պելկրատի մէջ կրած իր առաջին տպաւորու-
թիւնները՝ կը տեղեկագրէ նաև Ռուսիոյ և Աւստրիոյ միջև տեղի ունեցած պատե-
րազմական ղէպքեր:

Գերյարգուքեան քուս՝ և հօր մերոյ արքայի

Ողջունիւ սիրոյ յայտ լիցի ամենապատիւ հօր մերոյ, զի յուժնում հոկտեմբերի
հազիւ հասի ի պէլլըդատ: Եւ յաւուր օտոնի սրբոյն պետրոսի ալգանթարա եկեալ վիզարի
որ աստ էր, յանձնեաց ինձ զեկեղեցին և զժողովուրդն, որք ներկայք էին այնորիկ

1. Կը հետեի հոս տող մը ծածկագրութիւն:

2. Թրոսեան. վարք Մխիթարայ. էջ 842:

հանդիսութեան. համառոտութեամբ բանից ոմանց շուրջ գնահատութեամբ առ նորագոյն հովիւս իւրեանց: Բայց նախ քան զայս իրականութիւնս արարեալ էաք զամենայն այցելութիւնս, թէ՛ իշխանաց քաղաքիս և թէ մեծաւորաց Վանորէից, ներկայացուցանել զլինծայս, բաց ի յեպիսկոպոսէ, որ չէ տակաւին եկեալ ի Վէննայու:

Իսկ հայ ժողովուրդն երևեցաւ ինձ յոժմ բարի. և յուսամ թէ այնպէս երևեսցին միշտ... Ծ ոսկի խաբլլընէն յաւելաւ ինձ իբրու ոսկի և կէս, վասն զի յայն 14 աւուրս յորս ի Վիէննա կացի՝ զոչ ինչ ծանցիցի սակս կերակրոյ. յորս հայքն ի հաշ կոչեցին զիս կարգաւ... և եթէ յաւելի ևս ծնայի ի Վիէննա, զնոյն անոնէին ինձ. հատուցէ տէր ըստ արդեանց իւրեանց զվարձս...

... Նորագոյն լուր ի կողմանս մեր այս է, զի ի թիրօլու բանակէ կայսերն հայ մի անդ զոլով, զրեաց աստ եղեալ հայոց զգիր, և ասէ, թէ ճերմակ լաթն ընդ սաւառարտի բանակին յանդգնեցան մտանել ընդ նեղ կիրճն թիրօլ գաւառին: Եւ բնակիչք երկրին պատրաստօք և վստեալք զոլով ի կիրճն, տուեալք իցեն զմեծ ջարք, և կոտորում ճերմակ լաթից, ևս առաւել սաւառից. և այնպէս ամօթով և մեծաւ փաստու իւրեանց յետս դարձեալ: Եւ ասեն իշխանք քաղաքիս, թէ թիրօլցիքն բազմիցս տուեալք իցեն ինցա զինան սմին սուր ի յանցեալ և ի հին պատերազմունս, որպէս և մեք լսեաք զայս յայգրէն: Իսկ Ֆիլիպպորկու այս ինչ գրեցաւ. թէ մինչ քառասուն հազար զօրքն մօսկովու հեռի իբրու ժամաւ միով ճանապարհի ի բանակէ կայսերն բանակեալ իցէ, յանկարծ ֆռանսուզն զօրու մեծաւ դիմեալ զոլ ի վերայ մօսկովու: Իսկ մօսկովի ճէնէրալն նախապէս գիտակ զոլով նոցին անկարծ գալստեանն, վառեալ իցէ զզօրս իւր մեծաւ պատրաստութեամբ և սպասեալ գալստեան նոցին: Ապա ֆռանսուզն ի գիշերայն և անշնչիւ, եկեալ կարի մերձեցեալ իցէ բանակի մօսկովին, զի յարշալոյսն յանկարծ կայեալ ջարդեցէ: Այլ մօսկովն, մինչ նոքա սպասեն այն լուսոյն, կանխագոյն քան զնոսա, դիմէ ի վերայ նոցա, և տայ անխնայ ջարդ մի, և տեւ մարտն մինչև 3 ժամ աւուրն և առեալ զամենայն կահ և կարասի դառնայ ի բանակ իւր: Եւ սոյն յաղթանակօղ մօսկովքս յայժմ ցրուեալ ի գաւառս ֆռանսու, ուր 5, 1000 և ուր 10, 1000 անհնարինս նեղեն զնոսա և կողոպտեն զգիւղս և զքաղաքս անպարսկապս...

1735 հոկտեմբերի 20

Ստրուկ ծառայ տէրութեան քոյ
Հայր Յակոբ [Բուզայեան]

ԿԲ.

Ամբողջ հետագայ վաւերաթուղթը միակ պատմական դէպքով մը կը զբաղի: Երուսաղեմի Ս. Յակոբայ մասին Յունաց և Հայոց մէջ եռացող մեծ խռովութիւնն է: Հայր ձեռք ձգել կ'ուզեն՝ «պատմաշինով քէ այն տեղի նոցա՝ հայոց տակաւնի, որովհետեւ հապէշը և դպիրք՝ ընդ որս և ասորիք՝ համարեալ լիեկին իրք ի մասնէ հայոց»¹: Սոյն պատճառաբանութեամբ է որ կ'ըսէ Հ. Պօղոս վարդապետ, թէ «հապէշն, որպէս և ասորիք ի ներքոյ հայոց իցեն յաւրք»:

Այդ կնճռոտ խնդիրներն ու կռիւները ինչ ինչ մանրամասնութիւններ կը գտնեն Հ. Պօղոս վարդապետի նամակին մէջ, որոնց մասին Չամչեանի Պատմութիւնը կը լռէ. թէն փոխադարձաբար հոն ալ զանազան անցքեր դուրս թողուած են. բան մը՝ որ չի պահանջուիր անշուշտ նամակէ մը:

Յոյները առաջին անգամ 1655ին գրաւել սկսած են հայոց վանքը, Չատկի խոտորման կամ ծառապտիկ շփոթութեան վրէժը լուծելու համար²:

1. Չամչեան Պօմ. Հայոց. Հոր. Գ. էջ 809.

2. Անդ էջ 665.

Գերայարգեցելոյ տնտես տնտես Մխիթարայ Սիրայի Հօր մերոյ

... Զորպիտութեանց տեղւոյն ծանիք, զի ի Նոյնմերի ճամոջ եղև յունաց ընդ հայոց դատախազութիւն ի վերայ սուրբ յակօքու, որ յերուսաղէմ. քանզի հայք ի յան-
ցեալ ամի ձեռամբ սեղբոսին, (որ էր յայնժամ պագիրկեան պաշի) առին և ձեռաց յունաց
զփոքրիկ տեղ մի, որ այն տեղն հապէշին իցէ եղեալ և հապէշն, որպէս և ասորիք ի
ի ներքոյ հայոց իցեն լեալք, որպէս մոսգովն, ուրուսն և արաբականացիք ի ներքոյ յունաց
դաւանութեան. իսկ յոյնք այժմ զնացեալք առ դատաւորս տաճկաց ի ձեռն դրամոց
բազմաց առնուլ ի ձեռաց հայոց զսուրբ յակօքն բովանդակ. և իմացեալք հայոց զայս՝
անկան և նոքա առ դրունս դատաւորաց՝ տալով նոցա զդրամս բազումս և ցոյց տալով
նոյնա զայն հաստատութիւնն, որոց տունեալ է օմերն, մինչ տունեալ է հայոց զսուրբ յակօք.
Կոթելով զձեռն իւր ի վերայ այնր հաստատութեան թղթոյն՝ արարին զի բանն յունաց
ոչ առաջացաւ, այլ հայոց պատրիարզն հակաւ զկապայ. Բայց ասեն թէ մինչև 300
քսակ դրամ զնաց հայոց, մինչև ի յայս աստիճան ժամանեաց բանն. Եւ յետ բանիս
այսորիկ յանց 3 օր [...] էալ է մատնին զպատրիարզն հայոց՝ և նմա ասացեալ է, թէ
յոյնք եկեալ ասա [...] թէ խաբէութեամբ էառ ի ձեռաց մերոց զայն հապէշին տեղն՝
սեղբոսն [...] փաշային իւրոյ՝ ուստի խնդրեմք, զի իրաւամբ զատ արարեալ հա [...] մեզ
զտեղն մեր՝ ցոյց ինձ զհաստատութիւն ձեր վասն այնր տեղւոյն [...] բզն առ մատնին
ասացեալ թէ հաստատութեան գիրն այնորիկ տեղւոյն ոչ է աստ, այլ յերուսաղէմ. և
լուեալ զայս մատնին՝ հրամայեալ պատրիարդին յղել զոք ի յերուսաղէմ և բերել զայն
հաստատութեան թուղթն. և ընդ այն մարդոյ յղեալ է մատնին զմի չուխատար ես. և
ի վերջն բանիս այսորիկ ուր կայանայ ոչ գիտի. Քանզի ասեն թէ յոյնք վասն այսորիկ
իւրի մինչ 1000 քսակի դրամ բացորոշեալք են առ ի խարենի, և զբանն իւրեանց յառա-
ջացուցանել. Եւ ի յայսմիկ միջոցի զսեղբոս սառաֆն և նորին զեղբայրն ըմբռնեալ ի
բանիս եղին. Եւ ստոյգ ոչ գիտի պատճառն. Քանզի ոմանք ասեն, թէ սեղբոսն խափե-
փայ զիր կալեալ իցէ վասն տեղւոյ հապէշին. և ոմանք զայլ ինչ ասեն՝ վասն այնորիկ
է ի բանտի. Եւ հայոց ազգն յետ մեծի ուրախութեան՝ ունին այժմ զստատութիւն վասն
տեղւոյն հապէշին. Եւ մինչ զառաջին յաղթութիւնն արարին հայքն՝ առ ֆռանսէզ էլչին
ևս դիմեցին, և նա նոցա ասացեալ է, թէ ես ընդ ձեզ եմ և ոչ յունաց, և թէ ձեզ
պիտոյ լինի դրամ՝ ես ձեզ զտանեմ մինչև ցերկու հարիւր քսակ դրամոց. և յետ այսց
իրողութեանցս ի հրապարակի ժողովըրդեան ասացեալ է պատրիարդն զբարերարութիւն
էլչուն, թէ զմեզ սիրէ, և ի մեր կողմանէ է. իսկ մեզ մեղատեղի եղաք, մինչ բմբունեցիք
զոմանս և բերիք մեզ թէ ֆռանկք եղեալք են և մեք յղեցաք զնոսա... և մինն ևս ի
նոցունց մեռաւ և արեան տէր եղաք, և այլք նմանք բանք յորմէ արտաբերեցեալք
են.

Գերայարգելութեան ձերում

Նուաստալզունեղ ծառայ

ս. տ. Ծ [Հ. Պօղոս Վարդապետ]

տաճիկքն հռչակեն հաշտիլ ինքեանց
ընդ կարմիր գլխոյն. և ինձ հաւատալի
ոչ երևի:

յամի տեառն 1735

և Դեկ. 5:

[Կ. Պոլիս]

1. Վաւերաթուղթիս մէկ ծայրը պատուած ըլլալով՝ կը պահուին ինչ ինչ կէտեր, զորս անկիւնաւոր փա-
կազօով ցոյց կու տան:

(Շարունակելի)